ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԻՔՈՄՄ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
50	MONTALTO	MONTALTO GmbH	Մարտաբաճկոն՝ համալրումներով ՀՆՁ (Մարտաբաճկոն՝ տակտիկական գոտիով և պատյաններով) Մարտաբաճկոնը կազմված է դիմային, թիկունքային և երկու կողային հատվածներից, որոնք ունեն արագ անջատման, արձակման (մոլլե) համակարգեր: Դիմային և թիկունքային մասերը ուսերի վրա միմյանց ամրանում են կախաններով , որոնք , նույնպես, դիմացից ունեն արագ անջատման համակարգեր: Մարտաբաճկոնը բոլոր հատվածներում ՝ դիմային, թիկունքային, կողային, ունի արտակարված մոլլե համակարգի ամրագոտիներ: Դիմային և թիկունքային հատվածները բազմաշերտ են, ունեն սպունգային բարձիկներ, ցանցային օդափոխման շերտեր, ինքնակպչուն ժապավեններով հատվածներ, ներսի մասում ունեն զրահե վահանների տեղադրման համար նախատեսված գրպաններ, որոնք կոճկվում են (ամրանում են) նվազագույնը 4 սմ լայնքով, բարձր որակի ինքնակպչուններով: Կարերը ամուր են, ամրակարերը զիգզագաձև են: Պատրաստված է 1000 դեն նեյլոնե և/կամ 100% պոլիէսթեր նյութերից, նեյլոնե ժապավենից և պարաններից,

			հիմնական կարի համար օգտագործված թելի ամրության ինդեքսը՝ 1400 N , ներքին կարերի համար օգտագործված թելի ամրության ինդեքսը՝ 1000 N : ՈՒնի զույգով կրծքամասի և գոտկատեղերի արագ ամրացման-արձակման պոլիմեռային ճարմանդներ՝ նեյլոնե կախաններով, որոնք ամուր են, թույլ ճկվող, դժվար կոտրվող: Մարտաբաճկոնի քաշը՝ առանց ամրացվող պատյանների 2.9-3.6 կգ, դիմային և հետին վահանիկների լայնքը՝ 30-34սմ, բարձրությունը՝ 37-42 սմ: Դիմային և կողային հատվածները ունեն 9 հատ AK-74 ինքնաձիգի պահեստատուփերի համար նախատեսված գրպանիկներ, որոնցից 3-4 հատը՝ դիմային մասում, ունեն պահեստատուփերի ամուր ֆիքսման համակարգեր: Մարտաբաճկոնին ամրացվում են պատյաններ՝ 1 հատ՝ գոյատևման լրակազմի համար (12*16*7 սմ), 1 հատ առաջին բուժօգնության պայուսակի (10*15*6 սմ), և 1 հատ ռադիոկայանի տեղադրման (5*10*4 սմ): Մարտաբաճկոնին ամրացված է նաև, 2 հատ 1 տեղանոց նռնակի պատյաններ, 1 հատ դատարկ պահեստատուփերի ծալովի պատյան, 1 հատ ՛՛Գլոկ 19՛՛ ատրճանակի կոճկվող և մոլլե համակարգին ամրացվող պատյան, 1 հատ ատրճանակի պահեստատուփի պատյան, 1 հատ ժգուտային համակարգ (տուրնիկետ), և 2 հատ ինքնակպչուն ժապավենով ամրացվող ասեղնագործված կամ պոլուռետանային 6սմ* 10սմ չափսի տարբերանշան (գույները, ձևը, չափսերը և գրվածքները Մատակարարին կտրամադրվեն պայմանագրի կնքումից հետո՝ անմիջապես): Տակտիկական գոտին երկշերտ է, կազմված է ներքին՝ ինքնակպչունով վրակարված ազատ ծայրերով գոտիից և արտաքին գոտիից , որի ծայրերին մետաղական կարգավորվող, ամուր ճարմանդներ են և ներսի մասից ինքնակպչուն ժապավեն: Արտաքին գոտու երեսին ամրակարված է երկշերտ մոլլէ (տակտիկական ամրացման) համակարգ: Մարտաբաճկոնի արտաքին տեսքը, ձևը, ձևվածքը ըստ Պատվիրատույի կողմից ներկայացվող նմուշի: Մարտաբաճկոնի, տակտիկական գոտիի և պատյանների գունավորումը՝ մուլտիկամ (MC): 70 հատի կոնքի չափսերի փոփոխման հնարավորությունը՝ 75սմ-125սմ (միաչափս՝ ունիվերսալ) , 35

			հատինը՝ 90սմ-140 սմ : Պատյանների և աքսեսուարների չափսերի թույլատրելի շեղումը՝ 10%:Համարժեքության սկզբունքով փոխարինումը այլ չափսերի և ձևվածքի թույլատրվում է միայն Պատվիրատուի համաձայնությամբ: Փաթեթավորումը և պիտակավորումը գործարանային, ստվարաթղթե արկղերով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЭКОММ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
50			